ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«03» «դեկտեմբերի» 2024 թ. № 499-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 24-Ի N 107-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով և հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունիսի 24-ի N 228-Ա հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 107-Լ հրամանի N 11 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 4-րդ կետում, 5-րդ կետի 1-ին, 11-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 27-րդ ենթակետերում «քիմիական» բառից առաջ լրացնել «վտանգավոր» բառով,

2) 4-րդ կետում «իրականացումը» բառը փոխարինել «իրականացմանը մասնակցությունը» բառերով,

3) 5-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «նյութերի» բառից հետո «,» կետադրական նշանը փոխարինել «ու» բառով, «մշակումն ու իրականացումը» բառերը՝ «մշակմանը և իրականացմանը մասնակցություն» բառերով, իսկ «քաղաքականության» բառից հետո լրացնել «մշակումն» բառով,

բ. 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում

վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին վերաբերող իրավական ակտերի մշակումը»,

գ. 11-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ և 27-րդ ենթակետերում «և թափոնների» բառերը փոխարինել «ու թափոնների էկոլոգիապես անվտանգ» բառերով,

դ. 11-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում միջազգային՝ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի, «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին», «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան և «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման համակարգումը»,

ե. 12-րդ ենթակետում «գործընթացի համակարգումը» բառերը փոխարինել «գործընթացին Վարչության իրավասությունների շրջանակներում մասնակցությունը» բառերով,

զ. 19-րդ, 24-րդ ենթակետերում «քիմիական» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում վտանգավոր» բառերով,

է. 19-րդ ենթակետում «մշակումը» բառը փոխարինել «մշակմանը մասնակցությունը» բառերով,

ը. 25-րդ ենթակետում «քաղաքացիների» բառից հետո լրացնել «ներկայացրած՝ վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտին առնչվող» բառերով,

թ. 27-րդ ենթակետում «համագործակցությանը,» բառից հետո լրացնել «իրականացվող ծրագրերի համակարգմանը,» բառերով:

12/3/2024

X

ԱՐԱՄ ՄԵՅՄԱՐՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Signed by: MEYMARYAN ARAM 2412830247

Ա.ՄԵՅՄԱՐՅԱՆ

« 03 » դեկտեմբերի 2024թ.
ք. Երևան